ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԱՆԴՐԵԱՍ ԱԲԵՂԱ ԵՋԵԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԿԱՐԲԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 դեկտեմբեր 2010 թ.)

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, շուրջ քառասուն օրեր առաջ ես եւ իմ 16 սարկավագ եղբայրները կամքն Աստուծո եւ օրհնությամբ ազգիս Վեհափառ Հայրապետի ձեռնադրվեցինք քահանա՝ մեր սպասավորությունը բերելու Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու անդաստանից ներս:

Այս առիթով իմ որդիական երախտագիտությունն ու հնազանդությունն եմ ցանկանում հայտնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իր հայրական հոգածության եւ խնամքի համար, ինչպես նաեւ երախտապարտությունս եմ հայտնում իմ հոգեւոր ծնող՝ Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ՝ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պոռշյանին, սրանձնելու համար իմ եւ օծակից եղբայրներիս ձեռնադրության պարասխանատու պաշտոնը, շնորհակալություն եմ հայտնում ի մասնավորի Կարբիի Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ՝ Տ. Եփրեմ քահանա Զարգարյանին՝ այս սուրբ խորանին իմ անդրանիկ Ս. Պատարագը մատուցելու պատվին ինձ արժանացնելու համար:

«Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»:
(Յովհաննէս ԺԴ 6)

Սիրելի բարեպաշտ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր,

Մարդկային պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ճշմարտության որոնման հարատեւ ընթացք: Հիրավի, հնագույն ժամանակներից իսկ սկսած մարդկությունը միշտ փորձել է բացահայտել, հասու լինել իր գոյության նպատակն ու իմաստը հանդիսացող ճշմարտությանը: Եւ այդ հարատեւ փնտրտուքի վառ ապացույցն է մեր ստեղծած ողջ քաղաքակրթությունը: Ճշմարտության մասին դարեր շարունակ գրվել եւ այժմ եւս գրվում են բազմաթիվ գրքեր, տեղի են ունենում զանազան վիճաբանություններ: Ամեն մեկը փորձում է ճշմարտության իր պատկերացումները, մտածումները մատուցել մյուսներին եւ դրանք բացարձակեցնել: Սակայն մեզ՝ քրիստոնյաներիս համար արդեն երկու հազար տարի է ինչ ավարտվել է ճշմարտության փնտրտուքը, արդեն մեզ համար պարզ է այս երկրավոր կյանքի իմաստն ու նպատակակետը: Ինչպես Ս. Բարսեղ Կեսարացին է նշում. «Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ մարդացմամբ մեզ համար մեկընդմիշտ բացահայտվեց համընդհանուր, տիեզերական եւ միակ ու անփոխարինելի ճշմարտությունը»:

Սակայն ժամանակակից աշխարհում, որտեղ մարդկային կյանքը վերածվել է

նյութականի հետեւից ահագնացող մի մրցավազքի, որտեղ առաջնային եւ հիմնարար արժեքները երբեմն պլան են մղվում եւ հոգեւոր այս երբեմնացն ու թմբիրը արդարացնելու եւ օրինականացնելու համար հորինվում են բազմաթիվ «ճշմարտություններ», արդիական է դառնում Բլեզ Պասկալի հետեւյալ արտահայտությունը. «Քիչ է ճանաչել ճշմարտությունը, պետք է իմանալ՝ արդյոք այդ ճշմարտությունն իրապես ճշմարիտ է թե ոչ»:

Շատեր իրենց համար կյանքի ճշմարտություններ են դարձրել հարստությունը, ուժը, իշխանությունը, իմաստությունը: Սակայն Աստվածաշունչ մատյանում եւ հատկապես Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի երկրավոր կյանքի դրվագներում կարմիր թելի պես մի գաղափար է անցնում, որ այս երկրավոր կյանքի հանգամանքները՝ լինի հարստություն, իշխանություն, ուժ եւ իմաստություն, անցողիկ են, ժամանակավոր: Մեր Տեր Հիսուս իր քարոզչության ընթացքում անդադար շեշտում է, որ դրանք լոկ ժամանակավոր միջոցներ են հավերժականի ճանապարհին: Մարդիկ ցանկանում են, որ հասարակությունը ուշադրություն դարձնի իրենց, գնահատի եւ իրենց անունը ոսկե տառերով գրվի պատմության էջերում:

Սիրելի հավատացյալ եղբայրներ եւ քույրեր, մարդկային պատմությունը հաշվվում է տասնյակ հազարավոր տարիներ, սակայն մեզ միայն լոկ հինգ հազար տարվա պատմություն է հասել, այն էլ ոչ ամբողջությամբ, բազմաթիվ բացթողումներով եւ հարցականներով: Չմտածենք, թե մեզ համար մութ մնացած ժամանակներում չեն եղել մարդիկ, որոնք աչքի չեն ընկել իրենց իշխանությամբ, հարստությամբ, սակայն ժամանակի փոշին նրանց էլ չի խնայել եւ մեզ էլ չի խնայելու:

Մեր Տերն Իր իսկ կյանքով ցույց տվեց, որ այս աշխարհի այն հանգամանքները, որոնք մենք մեր կյանքի համար ճշմարտություն ենք դարձրել՝ ոչինչ են:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ տիեզերքի Արարիչն էր ու Տերը, չծնվեց ոսկեզարդ ապարանքներում, Նրան այցի չեկան այս աշխարհի մեծամեծները եւ հարուստները:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ տիեզերքի իմաստությունն էր, չելավ հրապարակներ, վեճի չբռնվեց ժամանակի նշանավոր իմաստունների հետ, հաստափոր հատորներ չգրեց:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ աշխարհի հզորությունն էր, հալածվեց, անարգվեց, տառապեց եւ խաչ բարձրացավ: Որպեսզի իր առաքյալի շուրթերով մեզ պատգամի, որ Տիրոջ աղքատներն ավելի հարուստ են, քան այս աշխարհի ընչեղները, որ Տիրոջ տկարներն ավելի հզոր են, քան այս աշխարհի ուժեղները, եւ Տիրոջ հիմարներն ավելի իմաստուն են, քան այս աշխարհի գիտունները:

Սիրելի հավատացյալներ, մեզ համար բացի Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսից չկա այլ ճշմարտություն, չկա այլ ճանապարհ, չկա այլ կյանք: Ինչքան էլ գայթակղիչ լինեն երկրավոր կյանքի իրողությունները, ինչքան էլ մեր սեփական ես-ը փորձի հազուրդ տալ իր ցանկություններին՝ պետք է աշխատենք, որ միայն ու միայն մեր կյանքի համար իմաստ ու նպատակակետ դարձնենք Քրիստոսի ճշմարտության լույսը: Որովհետեւ առանց դրա մեզ համար չի կարող լինել փրկություն, հավերժական կյանք. «Եւ ծանիջիք ճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Յովհաննէս Ը 12):

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսին եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն: